Բայց տնտեսականք և հասութականք [1] ուրիշ կերպ մըն ալ հնարած են հարկահանութեան. որուն վրայ շատ վէճեր եղած է, և ինչուան հիմա կանոնաւոր կերպով մը բնաւ 'ի գործ դրուած չէ. և կը կոչուի աճեցական հարկ [2] : Աճեցական հարկով ինչպէս որ անունէն ալ կրնայ գուշակուիլ, տէրութիւնը հարկատուին եկամուտին շատնալուն համեմատ՝ իւրաքանչիւր 100ին համար առած տուրքին չափն ալ նոյն համեմատութեամբ կ'աւելցընէ, այսինքն համեմատական հարկով 1000 դահեկան ունեցողն ալ 100ին 10 կուտայ, 10,000 դահեկան ունեցողն ալ. բայց աճեցական հարկի մէջ թէ որ 1000 դահեկան ունեցողը 0/0ին 1 տայ, որով 1000ին 10ը կ'ընէ, 2000 դահեկան ունեցողը 0/0ին 2 կուտայ, որով 2000ին 40 դահեկան կ'ընէ, 3000ին 90, և այլն : — Բայց թէ որ մինչև վերջը այս համեմատութեամբ երթըցուի, հարկը կրնայ այնչափ շատնալ՝ որ ամբողջ եկամուտին հաւասարի. ուստի հարկ կ'ըլլայ մէկ թիւ մը սահմանել, ու անկից անդին չտանիլ յառաջատութիւնը [3] : Այս կերպ հարկահանութեան նպատակը ան է՝ որ հարկը աւելի ստուար եկամուտ ունեցողներուն վրայ ծանրանալով՝ անոնց աւելորդն առնուի, ու անդին կարօտելոյն նիհար եկամուտին անիրաւութիւն չըլլայ, վասն զի իրաւցընէ խղճալի բան է որ տարին 2500 դահեկան վաստըկող բանուոր մը 250 դահեկան տուրք տայ, ու մնացածովը իր ընտանիքը դարմանէ, մինչդեռ անդին 300,000 դահեկան ունեցողն ալ խեղճ բանուորին համեմատութեամբ 30,000 դահեկան միայն կուտայ, ու մնացած 270,000ով ամենայն հանգստութիւն ունի և ուզած պերճութիւնը կ'ընէ : — Միով բանիւ հարկահանութեան նպատակը ընկերութեան ամենայն անդամոց օգուտը համար ըլլալով, երբոր այն օգուտը մատակարարելու համար պէտք եղածէն աւելի ըլլայ հարկապահանջութիւնը, յափշտակութիւն կը սեպուի. դարձեալ տէրութեան սրբազան պարտքերէն մէկն է՝ հսկել հարկաց բաժնելն արդար կերպով քաղաքացւոց վրայ ծրգուելուն. և ըստ այսմ մասին ահա աճողական հարկն ալ կ'արդարանայ :

Հ. Տ. Թ

1 Financier.
2 Impôt progressif.
3 Progression.

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՀԱՆՔԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Արոյր [1] :

ԱՐՈՅՐ կ'անուանի պղնձէ անագէ և ուրիշ մետաղներէ առաջ եկած բաղադրութիւնը, որ ըստ այլ և այլ չափու բաղադրութեան աւելի կամ նուազ կարծր կ'ըլլայ քան զպղինձը, և կը գործածուի դրամ, արձան, զանգակ, թնդանօթ ու զանազան զարդեր ու անօթներ շինելու, որոնց ամենուն ալ բաղադրութեան չափը իրարմէ տարբեր ըլլալուն կը հարկաւորինք աս տեղս իւրաքանչիւրին նուսխան դնելու :

Արձան, գերեզման, կոթող թափելու պղինձը՝ դիւրալոյծ պիտի ըլլայ, որ գաղափարին ամէն բարակ կոըրտուածքին մէջ ազատաբար մտնելով, անոր ամէն մէկ գծագրութիւնը ճիշդ հանէ : Միանգամայն պիտի ունենայ բաւական կարծրութիւն ալ, որ յանկարծական սասանութեանց դիմանայ, որուն համար ամենէն յարմար եղած բաղադրութիւնը կը սեպուի այս :

Պղինձ	91, 40	ուրիշ 93, 12	ուրիշ 89, 39
Անագ	1, 70	4, 78	4, 71
Զինկ	5, 53	2, 10	4, 87
Կապար	1, 37	—	1, 03

Արոյրէ հին դրամներուն չափը միշտ միակերպ չէ, դրամին կշիռքին հարիւրին հինգէն ինչուան տասուերկու անագ կը դրուի մէջը, մնացածը պղինձ է : Իսկ հիմա արոյրէ դրամ չգործածուիր :

1 Թուրք, ֆիրինճ :

Մետաղներուն բաղադրութիւնն է

Պղինձ 74
Անագ 26։

Զանգակ թափելու արոյրի բաղադրութեան մէջ կը մտնէ պղինձ, անագ, զինկ և կապար, երբեմն նաև երկաթ, պիսմութ և արծաթ, այլ և այլ չափով. քաղցրահնչիւն զանգակին բաղադրութեան չափն է

Պղինձ 78
Անագ 22

Իսկ Անգղիացւոց զանգակներուն բաղադրութիւնն է.

Պղինձ 80
Անագ 10,1
Զինկ 5,6
Կապար 4,3

Թնդանօթի համար պատրաստած պղինձը բաւական կակղութիւն պիտի ունենայ որ չճաթի, բաւական ալ կարծրութիւն որ հրձգութեանց ցնցման ու շփման դիմանայ. և դժուարահալ պիտի ըլլայ որ երկար ու անընդհատ կրակէ չայլայլի։ Ինչուան հիմա եղած փորձերէն կը տեսնուի որ աս իրեք յատկութիւնս ունեցող բաղադրութիւնն է

Պղինձ	100	ուրիշ	90,91
Անագ	11		9,09

մեծ թնդանօթներուն համար

Պղինձ 100
Անագ 12էն ինչուան 14

թէպէտ և կը համարին արուեստագէտք որ թնդանօթ թափելու համար արոյրին կատարեալ չափը ինչուան հիմա գտուած չէ։

Զարդարանքի համար գործածուելու արոյրը դիւրահալ պիտի ըլլայ, լոյծ, և ամէն տեսակ բարակ ձևի գալու յարմար, թափելու ատեն պիտի չծակոտի, գոյնը անոյշ դեղին պիտի ըլլայ, աքծնելու քաշյարմար և ոսկեզօծուելու ընդունակ։ Այս է այս,

Պղինձ 82
Զինկ 18
Անագ 3 կամ 1
Կապար 1,5 կամ 3

ուրիշ չափ,

Պղինձ 82,257
Զինկ 17,481
Անագ 0,238
Կապար 0,024

ուրիշ չափ ամենագեղեցիկ գունով

Պղինձ	82,	դարձեալ	64,45
Զինկ	18		32,44
Անագ	3		0,25
Կապար	1,50		2,86

ուրիշ չափ

Պղինձ	70,90	դարձեալ	72,43
Զինկ	24,05		22,75
Անագ	2,04		2,87
Կապար	3,05		2,65

ՕԳՏԱԿԱՐ ԳԻՒՏ

Պտուղը երկար ատեն պահելու հնարք։

Եթէ կամիցիս պահել զմիրգքն, որ մնայ տարի մի անապական, համն և հոտն, 'ի ճաշակելն. զձմերուկն, զսեխն, զխնձորն, զտանձն, զխաղողն, զայսպիսիքս այսպէս արա։ Զխաղողն, և քանիցս օր 'ի չոր տեղիս դիր, և յետոյ սև ձիւթիւ զկոթի ծայրերն ամրացո, որպէս զկոճակ փակս լինիցն, և կախեա 'ի փայտի 'ի կախ մնալով 'ի պաղ տեղիս. նա մնայ և դիմանայ մինչ 'ի բոլոր տարին։ Այլ զձմերուկն և զսեխն, դիր 'ի մէջ անուշ ջրայի գիշեր մի, ջրոյն քաղցր լինի և նոր. թէ ոչ՝ թէ թթու կամ գինեհամ լինի՝ նա թթու և գինու հոտ գայ 'ի նմանէ, այլ քաղցր լինի ջրոյն. և այնպէս արա. երբ հանես 'ի ջրոյէն՝ պահէ 'ի պաղ տեղիս, մինչև 'ի տարի մի մնայ, ստուգիւ։

ՈՍԿԻՓՈՐԻԿ